**26.02.2026թ., ՀՀ, ք. Երևան**

ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

**ղեկավար Սուրեն Թովմասյանին**

*Էլ. փոստ՝ valeri.karapetyan@cadastre.am*

Փաստաբան Կարեն Մարգարյանից

ՀՀ անձնագիր՝ [redacted]

Փաստաբանական գործունեության արտոնագիրը՝ 3363

Հասցե՝ ք. Երևան, [redacted]

Էլ. փոստ՝ margarian.karen@gmail.com, [redacted]

# ՀԱՅՏ

*( Կադաստրի կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդին անդամակցելու մասին)*

Հարգելի պարոն Թովմասյան,

ՀՀ Կադաստրի կոմիտեի հրապարակմամբ տեղեկացել եմ, որ Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմը համալրվում է և այդ նպատակով առաջարկվել է շահագրգիռ անձանց ներկայացնել համապատասխան հայտերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 19.01.2019 թվականից սկսելով իմ մասնագիտական փորձառությունը որպես իրավաբան, ապա նաև՝ 2023 թվականին ձեռք բերելով փաստաբանական գործունեության արտոնագիր, իմ մասնագիտական հիմնական ուղղվածությունը սկսել և զարգացել է անշարժ գույքի ոլորտում, որի հետ զուգահեռաբար անբաժան կերպով մաս է կազմել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի կիրառումը:

Նշվածի վառ ապացույց է այն, որ հանդիսանալով փաստաբան, ընդգծում եմ հիմնական ուղղվածություն՝ անշարժ գույքի ոլորտը (օրինակ՝ linkedin կայքում՝

https://www.linkedin.com/in/karen-margaryan-a07605191/ ): Բացի այդ, ակտիվորեն գործունեություն եմ իրականացրել այս ոլորտում, ինչի շրջանակներում էլ օրինակ իրապես նպաստել է www.e-cadastre.am կայքը, որն օգտագործում եմ 2019 թվականից (ըստ կայքի այսօրվա տվյալների՝ առաջին դիմումը ներկայացրել եմ 2020 թվականի մարտ ամսին):

Այսպիսով, մասնագիտական փորձառության ընթացքում իրավական աջակցություն եմ ցուցաբերել տասնյակ, եթե ոչ՝ հարյուրավոր անձանց իրենց իրավունքների իրացման հարցում՝ կապված գույքի պետական գրանցման, հողամասերի չափագրման, դրանց սահմանների ուղղման, վերադասությամբ վարչարարությանը մասնակցելու, նշանակալից և ոչ միայն՝ անշարժ գույքերի իրավական ուսումնասիրության (legal due diligence ) հետ, այդ իսկ պատճառով ներկայացնում սույն հայտը՝ Կոմիտեի կողմից քննարկելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ խնդրում եմ ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման 4-րդ կետով հաստատված N 4 հավելվածի պահանջների համապատասխան՝ ինձ ընդգրկել Կադաստրի Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում:

Հայտին կցվում են արտոնագրիս պատճենն ու անձնագրի սկանը:

փաստաբան Կարեն Մարգարյան

Ստորագրող
ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ
3905960451

2026-02-26 13:55:49 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID